Պարույր Սևակ

Անհաշտ մտերմություն

6

IV

Աշնանային քամու շնչից
Արդեն ձմռան հոտ էր գալիս,
Նա չէր փչում, այլ սուր ծակում:
Արեգակն էլ Գնդասարից
Կիսաքուն էր կարծես ծագում
Եվ արդեն ոչ թե ջերմություն,
Այլ միմիայն լույս էր տալիս:
Պաղ եղյամը արդեն վաղուց
Գիշերվա մեջ անտես մաղվում,
Բոլոր քարերը անխտիր
Ծածկում էր բարակ խավով,
Այնպես, ինչպես որ յայլաղում
Հովիվների ձեռքը սովոր
Աղաքարերն է լոկ աղում:
Չարժեր մնալ էլ յայլաղում,
Երբ որ հիմա տաք էր գյուղում,
Իսկ ցելերում խոտն էր աճել,

Խոզաններում՝ ձեռքից թափված
Հասկ ու հատիկ դեռ մնացել:
Եվ նստելով զամբիկ իր ձին՝
Մկրտիչն էլ կոլխոզ իջավ,
Որ գոմերի հարցը լուծի:
Մինչ այդ արդեն Եղյան Կարոն
Զանգ էր տվել, հայտնել շրջկոմ,
Թե ձմեռել մենք չենք կարող՝
Չունենալով ձմեռանոց
Գառի համար ու ոչխարի:
-Կվերջանա շուտով տարին,
Ժամանակը չի սպասում:
Թե մնացած երկու ամսում
Գլուխ չգա գործը արագ՝
Կլինենք խաղք ու խայտառակ:

V

Դոնփակ, ապա և բաց ժողովում
Լուծվել էր հարցը ընդդեմ Թորգոմի:
Հիմա նա տանը աջ ու ձախ կողմից
Իր թավ հոնքերն էր իրար ժողովում:
Նախագահել էր երկու ժողովում
Քարտուղարն ինքը, որ պարտշրջկոմից
«Վիլիս» էր նստել ու եկել իսկույն:
-Եթե դու գյուղում քեզ վատ ես զգում,-
Ընկեր Վերդյանն էր դիմել Թորգոմին,-
Ազատենք, գնա ապրիր քաղաքում,
Իսկ սա կոլխո՞զ է, սա գյո՞ւղ է… Մեզ մի
Զեկուցում կարդա դու կոմունիզմից,

Որ մոտենում է, գալիս է, այո՛,
Յոթ մղոնանոց հսկայի քայլով:
Բայց հո դա, եղբա՛յր, չի նշանակում,
Որ գյուղում՝ դու քեզ զգաս քաղաքում,
Եղածի առաջ աչքերդ փակես
Եվ դիտմամբ, զոռով ներշնչես դու քեզ,
Թե անտաշ քարը խոյակ է, խարիսխ,
Ջբոսնող խումբ է հոտը ոչխարի:
Ներեցեք, գուցե կոպիտ եմ ասում,
Բայց «Դոն Կիխոտն» եմ ես այստեղ հիշում…
…«Եվ այդ օրվանից, ախր ո՞ր օրվանից,-
Խորհում էր Թորգոմը, - ես այս օրին հասա»:
Եվ կյանքն էր վիրհիշում այն կավաշեն տանից,
Որտեղ ծնվել, սնվել, առել հասակ,
Վազվզել էր բոբիկ, բերանքսիվայր ընկել,
Փխրուն հողերի մեջ խաղացել էր «տուն-տուն»
Լուսնյակը դարձնելով իրեն զրուցընկեր,
Հարևանի դուստրը՝ խանում-խաթուն…
Թվում էր, թե ոչինչ չի փոխվի աշխարհում.
Միշտ կճողփա լիճը իր եզրերին,
Դաշտածաղիկի բույրը լեցուն մարագներում
Խայտանք կպատճառի զույգ եզներին,
Կյանքը պարզ կմնա՝ ինչպես առակներում –
Կովը միշտ կաթ կտա, արտը՝ գարի,
Տատը միշտ կնստի թել ճախարակելու,
Պապը չի ձանձրանա «խեր ու շառ»-ից,
Եվ նոր տանջված հոգին բերնից պիտի հանի
Խարազանը դաժան հարկահանի…
Ինչքա՛ն հեշտ է լինել վշտին անգետ մանուկ,
Երբ դեռ անգամ չկա փոխան հագիդ…

Հետո կյանքը փոխվեց այնպես հանկարծակի,
Ինչքան աշնան քամուց անտառն է մերկանում…
Սակայն ո՞ւր են նրան այդ հուշերը տանում,
Ի՞նչ գործ ունի հեռվում, ինչի՞ համար…
Դեռ երեսուն թվից այս նույն կոլեկտիվում
Նախագահել է նա ահա այսքան տարի
Եվ շատերի համար օրինակ է եղել,
Գրավել է, շահել միշտ առաջին տեղեր,
Սիրվել շարքայինից, հարգվել ղեկավարից…
Ի՞նչ պատահեց, սակայն, նրան այս մի հարցում…
Ի՛նչ դուրս եկավ, մինչդեռ ինքը ի՛նչ էր կարծում…
Կողքին Մկրտիչն էր, որ չէր նայում նրան
Եվ անհարմար զգում աշակերտի նման,
Որին դրվատում են բոլորի մետ:
Մեղք չէր գործել անշուշտ իր ընկերոջ առաջ,
Բայց մի անմեկնելի, մի մանկական ամոթ
Թույլ չէր տալիս նայել այն Թորգոմին՝
Երկար տարիների իր այն բարեկամին,
Որին սիրում էր նա եղբոր նման,
Եվ որ վատ էր զգում, ամաչում է հիմա…
Գուցե բացատրեր այլ կերպ նա Թորգոմին,
Գուցե այլ կերպ խոսեր՝նա հասկանա՞ր…
Եվ ժողովից հետո, երբ որ պետք էր գնալ,
Նա վեր կացավ արագ և Թորգոմի
Ներքև հակված գլուխն իր գրկի մեջ առավ.
-Դե՛, դե՛, բա՛ռձր պահիր՝ ինչպես էիր առաջ,
Ոչ ոք դեռ չի տեսել քեզ գլխահակ, Թորգոմ,-
Եվ Մկրտիչը գրկեց ու բոլորի առաջ
Ջերմ համբուրեց նրան գորովանքով…

VI

Եվ տիպային նոր գոմերի
Նախագիծը գծեց Վաչեն:
Դեռ մոայլ էր Թորգոմն էլի.
Իր սխալն էր նա հասկացել,
Բայց դժվար էր միանգամից
Իրեն նորից վերականգնել,
Հին հունի մեջ նորից մտնել:
Եվ ակումբի շենքը մնաց
Առժամանակ կիսակառույց:
Նոր՝ խելացի հերթ էր տրված,
Որ և պիտի լիներ վաղուց.
Նախ՝ գոմերը, հետո՝ պալատ…
Եվ Մկրտչի աչքի առաջ
Լեկցիաների անգիր արած
Տետրակներից վեր էր հառնում
Գո՛մը… Հապա նայե՛ք գոմին.
Լուսամուտներ ամեն կողմից,
Ե՛վ տաք, և՛ պաղ ջրի ծորակ:
Լայն ու մաքուր,
Հարմար, տաքուկ,-
Եվ որքան հե՛շտ, որքան արա՛գ…
Իսկ դարբնոցում, բոցի առաջ,
Գեղամ ուստան, քրտնակալած,
Տաք երկաթն է հանգիստ ծռում՝
Մի ականջը Դանել քեռուն:
Հայրն Արայի՝ բրուտ Ավոն,
Իր տղայի և Երազի
Հարսանիքը պիտի անի,

Եվ նոր զույգի նոր տան համար
Պատվիրել է պատուհանի
Ամուր ցանցեր:
-Ա՛յ խնամի,
Ավելորդ է, կարիք չկա:
Էլ ոչ գող կա, ոչ թշնամի,
Ինչի՞դ է պետք ցանցը երկաթ,-
Եվ բացակա Ավոյի հետ
Վեճ է մղում Գեղամ ուստան:
-Ճիշտ ես ասում, մութ կլինի,
Ուրիշ ոչինչ, - համաձայնում,
Հաստատում է Դանել քեռին:
Էլ ինչո՞ւ է ուստան շինում:
Ոնց չշինի, բա ի՛նչ անի,
Պահանջել է երբ խնամին:
-Դե հին մարդ է, դժվար է շատ
Նրան նոր բան հասկացընել,-
Լուրջ հարում է Դանել քեռին
Այնպես, կարծես ինքը ջահել
Կոմսոմոլ է, իսկ խնամին
Զառամյալ ծեր, մինչդեռ իրոք
Ինքը փոքր է մի հինգ տարով:
-Հա, հին մարդ է, ո՞նց հասկանա՝
Կոմունիզմի վախտ է հիմա…
Եվ սկսվում, ծայր է առնում
Նրանց սիրած այդ թեմայով
Զրույցը տաք:
Եկող գարուն
Արդեն պիտի մեծ ֆերմայում
Էլեկտրախույզը աշխատի:

Վճռվում է հարցը բրդի:
Մեղրի հարցն էլ Դանել քեռին
Վճռել է դեռ անցյալ տարի:
Հացն ու կաթն էլ ծով են գյուղում:
Այս ամենը ցույց են տալիս,
Որ մոտակա ապագայում
Ծով կլինի բերք ու բարիք:
Ինչի՞ համար, ախր ինչի՞,
Ունեցածը մեզ հերիք չի՞:
-Ուստա՛ Գեղամ, հոգուդ մեռնեմ,
Էս բոլորը ասում են է՛ն,
Որ կոմունիզմ պիտի տեսնեն
Ինձ ու քեզ պես պառավներն էլ…
***
Նույն այդ պահին՝ հեզ ու խելոք,
Թվում է թե գիտակցելով,
Որ այսուհետ մի կես տարի
Կարոտ պիտի մնան սարին,
Հոծ հոտերն են իջնում սարից,
Իջնում այնպես ծանր ու դանդաղ,
Ասես խոտերը հաշվելով…
Ամենուրեք լուռ է, հանդարտ:
Միայն՝ կարծես փոքր-ինչ խռով,
Ասես փոքր-ինչ վիրավորված,
Որ հյուրերը այսքան օրվա
Հեռանում են միանգամից,-
Մրթմրթում է աշնան քամին:
Իսկ քիչ հետո՝ մինչ այդ հանդարտ
Լեռնաշխարհը միանգամից
Վերջին անգամ կյանք է առնում:

Ամեն թփից, ամեն քարից
Շունն է հաչում, գառն է մայում,
Լեռան լանջից ու կատարից
Քոչվորներն են իրար նայում,
Իրար կանչում և ձայն տալիս
Կովին, հորթին, գառ ու մաքուն:
Իսկ քարափը, ձորն ահալի
Ձայնակցում են, արձագանքում
Եվ կանչին ու ձայնին տալիս
Հնչեղություն զարմանալի:
Նստած ջահել մի զամբիկի,
Հեղուշի և Երազիկի
Ուղեկցությամբ իջնում է ցած
Մկրտիչը:
Կարծես հարբած՝
Աշնան քամին հոհոում է:
Նայում են ցած ու լռում են:
Ահա ցածրում, սարալանջին,
Իրենց հոտերն են արածում:
Բայց ո՛չ, նայի՛ր, չե՞՞ն արածում.
Կշտացել են ու նայում են:
Շո՛ւրջը այնպես հմայուն է,
Կարծես դյութված ու կախարդված:
-Ի՞նչ բան է սա, տե՛ր իմ աստված:
Ետ եմ դառնում ու նայում եմ…
Տե՛ս, մենք ինչից ինչ ենք դարձել,-
Հեղինեն է խոսում հանկարծ՝
Ետ դառնալով Մկրտիչին.
-Ո՛չ դու ես դու, ո՛չ ես եմ ես:
Փոխվել, ուրիշ, այլ է դարձել

Ձորն էլ, սարն էլ, քարն էլ կարծես:
Եվ ամենից գլխավորը՝
Հին է անուն-ազգանունը,
Բայց մեր մարդիկ ա՛յլ են, նո՛ր են:
Հապա ինքդ նայիր մեզ մի:
Ա՛յ, ես հիմա հասկանում եմ,
Որ հասնում ենք… կոմունիզմին…
Մկրտիչը լսում նրան,
Նրան շատ լավ հասկանում է:
Ավելորդ է թվում միայն
Խոսել, ասել՝ հասկանում եմ:
Եվ ներշնչված նայում է ցած:
Տարածվել է նրանց առաջ
Հորիզոնը հեռո՛ւ-հեռո՛ւ,
Որ այս լեռան սեգ կատարից
Թվում է թե գալիս-գալիս,
Մոտենում է և մոտենում,
Մոտենում է, հասնում կարծես,
Ուզես՝ ձեռքով կշոշափես…
1947-1952թթ